



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ԽԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2020թ.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
ԷԼԻՆԱ ԳՅՈՒՐՋՅԱՆԻՆ
Հեռ՝ +37499515600
Էլ.փոստ՝ ldpf.foundation@gmail.com

Ի պատասխան Ձեր 15.01.2020թ. գրությանը

Հարգելի տիկին Գյուրջյան

Տեղեկացնում եմ, որ 1-ին կետով նախատեսված տեղեկատվությունը տեղադրված է Լոռու մարզպետարանի պաշտոնական կայքէջի (lori.gov.am) «Դիմեք մեզ» բաժնի «Պարզաբանումներ տեղեկատվություն ստանալու իրավունքի վերաբերյալ» ենթաբաժնում:

2-րդ կետով Ձեր կողմից ներկայացված տեղեկատվությունը օպերատիվ կերպով տեղակայվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում: Անհրաժեշտության դեպքում տրամադրվում է նաև ՁԼՄ-ներին՝ դրանք հրապարակելու առաջարկությամբ:

3-րդ կետի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից ներկայացված ողջ տեղեկատվությունը նույնպես տեղակայվում է կայքէջի՝ մասնավորապես «Տեղեկատվական կենտրոն» բաժնում և «Մարզպետարան» բաժնի «Հաշվետվություններ» ենթաբաժնում: Դրանք պարբերաբար նորացվում են սահմանված ժամկետներում:

4-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ ՀՀ Լոռու մարզպետի 18.09.2019թ. թիվ 545-Ա որոշմամբ ՀՀ Լոռու մարզպետարանում տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձ է նշանակվել Լոռու

մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի պարտականությունները կատարող, բաժնի գլխավոր մասնագետ Աննա Գասպարյանը (հեռ. (0322) 2-04-13, բջջ. (077) 212-337, էլ հասցե- lori.press@mta.gov.am):

ՏԱ պատասխանատու պաշտոնատար անձի մասին տեղեկատվությունը տեղադրված է մարզպետարանի պաշտոնական կայքի «Դիմել մեզ» բաժնի «Տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու» ենթակետում:

5-րդ և 6-րդ կետերի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ Քաղաքացիական ծառայության նոր համակարգին անցնելուց հետո, Լոռու մարզպետարանում չի իրականացվել թափուր պաշտոնի մրցույթ: Մրցույթների կազմակերպման և անցկացման ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ սահմանված կարգով համապատասխան տեղեկատվությունները կտեղադրվեն Լոռու մարզպետարանի պաշտոնական էլեկտրոնային կայքում, ինչպես նաև ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի տեղեկատվական հարթակում, որտեղից հանրությունը կարող է օգտվել օրենքով սահմանված հրապարակման ենթակա տեղեկատվությունից: Համաձայն վերը նշված որոշման 15-րդ կետի՝ մրցույթի թեստավորման փուլը տեսանկարահանվում է և առցանց ուղիղ հեռարձակվում, իսկ մինչև առցանց ուղիղ հեռարձակման հնարավորությունը, Լոռու մարզպետարանում անցկացվող թափուր պաշտոնի համար կազմակերպվող մրցույթին զանգվածային լրատվամիջոցները և հասարակական կազմակերպությունները կարող են ներկա գտնվել և հետևել մրցույթների ընթացքին:

Հարգանքով՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ